

«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի մարզային փուլ
Հարցաշար - 9-րդ դասարան - 120 րոպե

N 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Հովհաննես նշանակում է. (0,5 միավոր)
1) Փրկիչ 2) Օծյալ 3) Աստծու շնորհ 4) Ուսուցիչ
2. Ո՞ր գետում մկրտվեցին Տրդատ թագավորը, իշխաններն ու հայ ժողովրդի մեծ մասը: (0,5 միավոր)
1) Արածանի 2) Հորդանան 3) Տղմուտ 4) Արաքս
3. Բ՞նչ է նշանակում վեղար: (0,5 միավոր)
1) Հավատք 2) սուրբ կամ բարի ոգի
3) պայծառատեսություն 4) գիտելիք
4. Ո՞վ է համարվում հայ հոգևոր երգերի հիմնադիրը: (0,5 միավոր)
1) Ս. Ներսես Ա. Պարթև 2) Ս. Եզնիկ Կողբացի
3) Ս. Սահակ Պարթև 4) Ս. Եղիշե
5. Ե՞րբ է տեղի ունեցել հանուն քրիստոնեական հավատի աշխարհում առաջին պատերազմը: (0,5 միավոր)
1) 312 թ. 2) 301 թ. 3) 451 թ. 4) 315 թ.
6. Որտե՞ղ են արձուակալել Հովհաննես Ե. Դրասխանակերտցուն հաջորդած երեք կաթողիկոսները: (0,5 միավոր)
1) Դվին 2) Արգինա 3) Կարս 4) Աղթամար
7. 1361 թ. ո՞ր կաթողիկոսի հրավիրած ժողովն է չեղյալ հայտարարում Մսի և Ադանայի ժողովների որոշումները: (0,5 միավոր)
1) Հակոբ Բ. Անավարզեցի 2) Մխիթար Ա. Գռներցի
3) Մեսրոպ Ա. Արտազեցի 4) Պողոս Ա. Սսեցի
8. Հայոց ո՞ր կաթողիկոսն է Ալեքսանդր 1-ի կողմից արժանանում ջերմ ընդունելության և նվեր ստանում վեղարի ադամանդակուռ խաչ: (0,5 միավոր)
1) Եփրեմ Ա. Չորագեղցի 2) Ներսես Ե. Աշտարակեցի
3) Հովհաննես Ը. Կարբեցի 4) Դանիել Ա. Սուրմառեցի

N 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Հետևելով Ս. Բարդուղիմեոս առաքյալի քարոզերին՝ քրիստոնյա է դառնում Սանատրուկ թագավորի քույրը՝ _____:

(1 միավոր)

10. Կաթողիկոսի ձեռնադրության և օժման արարողությունը կատարվում է _____ եպիսկոպոսների կողմից:

(1 միավոր)

11. Հռոմկլայի կաթողիկոսները որդեգրեցին « _____ » տիտղոսը:

(1 միավոր)

12. Արևելյան Հայաստանի բազմաթիվ վարդապետներ, որոնց գլխավորում էին Հաղպատի և Սանահինի վանքերի վանահայրեր _____ և _____, հրաժարվում են ընդունել Սսի ժողովի որոշումները:

(1 միավոր)

N 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Հասկացությունը համապատասխանեցնել բացատրությանը:

(1 միավոր)

- 1. նավակատիք
- 2. փարիսեցի
- 3. ծես
- 4. մաքսավոր

1	
2	
3	
4	

ա. հարկահավաք

բ. Եկեղեցում օրվա տարբեր ժամերին կատարվող ամենօրյա աղոթքի արարողություն

գ. Եկեղեցում որոշակի կանոնակարգով կատարվող արարողությունների ամբողջությունը

դ. Իսրայելում օրենքի և կրոնական ավանդույթների պահպանությանը նվիրված կրոնավոր ե.նորակառույց կամ վերանորոգված եկեղեցին բացելու օժման հանդիսավոր արարողությունը

14. Աշխատության վերնագիրը համապատասխանեցնել հեղինակի անվանը:

(1 միավոր)

- 1. «Ազգապատում»
- 2 «Եղծ աղանդոց»
- 3. «Հայոց պաշտամունքային վայրեր»
- 4. «Վարք Մաշտոցի»

ա. Ստեփան Մելիք-Բախշյան

բ. Մաղաքիա արք. Օրմանյան

գ. Եզնիկ Կողբացի

դ. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ

ե. Կորյուն

1	
2	
3	
4	

N 15-16

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը՝ 5 փաստից

15. Իրադարձությունները դասավորել ըստ հաջորդականության:

(1 միավոր)

- ա. Դանիել Ա. Սուրմառեցին հաստատվեց կաթողիկոսական գահին:
- բ. Պարսից շահ Աբաս I-ը կազմակերպեց արևելահայ բնակչության բռնագաղթը Պարսկաստանի խորքերը:
- գ. Կիրակոս Վիրապեցին օծվեց Ամենայն Հայոց կաթողիկոս:
- դ. Ցարական կառավարության հրամանով Սյունյաց մետրոպոլիտությունը դադարեց գոյություն ունենալուց՝ վերածվելով եպիսկոպոսական թեմի:
- ե. Հայկական պատվիրակությունը Հակոբ Ջուղայեցու գլխավորությամբ ուղևորվեց Կ. Պոլիս՝ Եվրոպա մեկնելու համար:

1	
2	
3	
4	
5	

16. Հայոց կաթողիկոսներին դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության:

(1 միավոր)

- ա. Խաչիկ Բ. Արշարունեցի
- բ. Հովհաննես Գ. Օձնեցի
- գ. Մովսես Բ. Եղիվարդեցի
- դ. Գրիգոր Դ. Տղա
- ե. Հովհաննես Ը. Կարբեցի

1	
2	
3	
4	
5	

№ 17

Աշխատանք սկզբնադրությամբ՝ կազմված 2 հարցից

«Նա Հայոց ժողովրդի մեջ պայծառացրեց վանական դասը, նա էր, որ վերականգնեց Սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռը Հայաստանում և փայլեց սրբությամբ և ամենայն պարկեշտությամբ: Նա պահեցող էր և աղոթող»:

1) Ո՞ւմ գրչին է պատկանում մեջբերված հատվածը:

(1 միավոր)

2) Ո՞ր կաթողիկոսի մասին է խոսքը:

(1 միավոր)

N 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ:

(2 միավոր)

- 1) Ապաշխարության խորհուրդը կարող է կրկնվել:
- 2) Մկրտությունը, Դրոշմը, Ապաշխարությունը և Ձեռնադրությունը պարտադիր խորհուրդներ են:
- 3) Դրոշմի խորհուրդը կատարվում է օրինված ջրով:
- 4) Մկրտությամբ մենք մաքրվում ենք աղամական մեղքից, դառնում քրիստոնյա:
- 5) Ձեռնադրության խորհուրդը միշտ կատարվում է Մկրտության ընթացքում:

--	--

19. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ:

(2 միավոր)

- 1) Արդեն III դ. կեսերին Մեծ Հայքում գոյություն ունեւ լավ կազմակերպված և ճանաչում գտած եկեղեցի:
- 2) Հայոց եկեղեցին ընդունում է միայն առաջին երեք տիեզերական ժողովների որոշումներն ու կանոնները:
- 3) Արիոսը սկսեց քարոզել, որ Ս. Հոգին Աստված չէ:
- 4) Ս. Գրիգոր Լուսավորիչը V դարից հիշատակելի սուրբ է եղել նաև Բյուզանդիայում, հետագայում՝ նաև Ռուսաստանում:
- 5) Նեստորը մերժում էր Ս. Երրորդության մեջ Որդու Աստվածությունը:

--	--

20. Շարադրանք:

(2 միավոր)

Տյառնընդառաջ (Ինչո՞ւ է կոչվում Տյառնընդառաջ: Ներկայացրեք տոնի իմաստը և տոնակատարությունը):